



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոլերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023


Մարտի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոլերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոոլերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարտի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 3-5 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 26-ին, 29-ին. Տավուշում +20...+24°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +12...+14°C, նախալեռնային շրջաններում՝ +22...+24°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +26...+28°C, նախալեռնային շրջաններում՝ +18...+20°C, Շիրակում՝ +14...+18°C, (Աշոցք՝ +12°C) Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +16...+17°C, նախալեռնային շրջաններում՝ +18...+20°C, Գեղարքունիքում՝ +14...+18°C (Սեյունովկա՝ +12°C), Լոռիում՝ +16...+19°C, Արմավիրում, Արարատում՝ +23...+24°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +13...+17°C, նախալեռնային շրջաններում՝ +21...+23°C:

Ամենացածր ջերմաստիճանները դիտվել են Տավուշում՝ -1...+3°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ -2...-3°C, նախալեռնային շրջաններում՝ +2...+4°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +3...+5°C, նախալեռնային շրջաններում՝ 0...-3°C, Շիրակում՝ -3...-7°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 0...-2°C, նախալեռնային շրջաններում՝ 0...+1°C, Գեղարքունիքում՝ -2...-6°C, Լոռիում՝ 0...-3°C, (Տաշիր՝ -6°C) Արմավիրում՝ +2...+3°C, Արարատում՝ +3...+5°C Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 0...-5°C, նախալեռնային շրջաններում՝ +1...+3°C:




Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 16-37մմ (135-308%), Լոռիում՝ 11-33մմ (90-182%), Տավուշում՝ 18-28մմ (94-146%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 14-17մմ (74-111%), նախալեռներում՝ 7մմ (45%), Գեղարքունիքում՝ 3-25մմ (19-147%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 9-15մմ (37-60%), նախալեռներում՝ 4մմ (27%), Արմավիրում՝ 4-9մմ (33-62%), Արարատում՝ 2-14մմ, (17-134%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 10մմ, նախալեռներում՝ 12մմ (71%), Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 8-15մմ (54-58%), հովտային շրջաններում՝ 5մմ (38%):

Հանրապետությունում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ -3...-6°C, (Ամասիա՝ -11°C, Աշոցք՝ -15°C) նախալեռնային շրջաններում՝ 0...-5°C, հովտային շրջաններում՝ -2...+1°C:












Վեգետացիոն ցուցիչի արժեքն ըստ արբանյակային տվյալների



Ինչպես երևում է արբանյակային տվյալների հիման վրա ստացված քարտեզից մարտի երրորդ տասնօրյակում մշակաբույսերի վեգետացիան ամենուրեք վերսկսվել է:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Կարտոֆիլ

Նախալեռնային շրջաններում կարտոֆել է կարտոֆիլի նախացանքի և ցանքի աշխատանքներ: Կարտոֆել է տնկանյութի տեսակավորվում, հեռացվել է բոլոր նեխած, վնասված, հիվանդություններով ու վնասատուներով վարակված, բարակ ծիլեր ունեցող պալարները: Տնկումը կարտոֆել է 70սմ միջշարային և 22-24սմ միջբույսային տարածությամբ, 6-8սմ խորությամբ:

Տասնօրյակի ընթացքում դիտված տեղումները դժվարեցրել են դաշտային աշխատանքների կատարումը, մյուս կողմից էլ բարձրացրել են հողում խոնավության պաշարները:



Աշնանացան ցորեն


Հովտային շրջաններում բազմամյա միջին ժամկետներից 18-22օր, առանձին նախալեռնային շրջաններում՝ 30-33 օր շուր աշնանացան ցորենը ցողունակալել է:

Աշնանացանի բարձրությունը տասնօրյակի վերջին կազմել է 16-22սմ, տասնօրյակային աճը կազմել է 3-6սմ:

Մերձավանում աշնանացանի դաշտում բույսի աճի և զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող հողի արդյունավետ խոնավության պաշարները 0-10սմ շերտում՝ 14մմ, 0-20սմ շերտում 31մմ, 0-30սմ շերտում կազմել է 52մմ, որն անցյալ տասնօրյակի համեմատ բարձրացել էր 2-4մմ-ով:

Պտղաբերություն, խաղող

Ինչպես և կանխատեսվել էր Արարատյան դաշտում բազմամյա միջին ժամկետներից 15-20 օր շուր դեղձենին ծաղկել է: Ծիրանենու ծաղկումն ավարտվել է, սկսվել է պտղի ձևավորումը:





խնձորենի

Առանձին նախալեռնային շրջաններում հնդավորները ծաղկել են, առաջացել են ծաղկաբույլերը:

Վեգետացիայի ողջ ընթացքում անհրաժեշտ է կատարել ագրոտեխնիկական մի շարք միջոցառումներ. կազմակերպել կանոնավոր բուժում հիվանդությունների և վնասատուների դեմ, փխրեցում և պայքար մոլախոտների դեմ: Հովտային շրջաններում բազմամյա միջին ժամկետներից 19-22 օր շուր դիպվել է խաղողի վազի բողբոջների ուռչում և բացում, իսկ Սյունիքի հովտային շրջաններում առաջացել է երրորդ փերևը: